ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

06 նոյեմբերի 2012 թվականի N 156-Ա

ք. Հրազդան

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ **կարգադրում եմ.**

1. ***Հայկանուշ Հովհաննիսյանին*** 2012 թվականի նոյեմբերի 6-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2007 թվականի նոյեմբերի 6-ին կնքված N 64 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ ***2012 թվականի հոկտեմբերի 24-ի N 01/21.2/4043-12 գրավոր ծանուցումը***:

2. Մինչև ընտրության արդյունքում նոր գործադիր տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Հայկանուշ Հովհաննիսյանին***:

3. Առաջարկել դպրոցի կառավարման խորհրդին՝ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Եղվարդի N 3 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրություն:

4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ